Հավելված 2

2023 թ.« հունվարի» « 25_» -ին
կնքված N _____պայմանագրի

Դրամաշնորհային ամփոփիչ հաշվետվություն

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում
Դրամաշնորհի N	ԴՏՊ-1160-11012/Ե-4/23
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	Բուժական մանկավարժության և սոցիալական թերապիայի կենտրոն «Մայրի» ՀԿ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31
Հաշվետու ժամանակահատված	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31
Ներկայացման օր	Հունվարի 10, 2024
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Զարուհի Մանուկյան

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

«Մայրի» կենտրոն հաճախող շահառուների հետ սոցիալ-վերականգնողական գործընթացներ՝ արհեստանոցներում աշխատանքի և արվեստի խմբային պարապմունքների միջոցով: Շահառուների անձնական գործերի ըստ տրված ձևաչափի լրացում, շահառուների անհատական կարիքների գնահատում և անհատական պլանների կազմում: Ծանոթական դասախոսություններ, քննարկումներ այն կազմակերպությունների աշխատակազմի հետ, ուր հաճախում են շահառուները՝ հաշվետու

ժամանակաշրջանում իրականացված սոցիալ-վերականգնողական աշխատանքի արդյունքերի, դպրոցում/մանկապարտեզում դրանց տեսանելիության վերաբերյալ :

Ներառականությանը նվիրված միջոցառումների իրականացում:Ազատ զրույցներ շահառուների և ծնողների հետ:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խ նդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվեց «Մայրի» կենտրոն հաճախող շահառուների հետ սոցիալ-վերականգնողական աշխաատնքներ՝ արհեստանոցներում աշխատանքի և արվեստի խմբային պարապմունքների միջոցով:
«Արեգնազան» կրթահամալիրի հատուկ մանկավարժների ինչպես նաև «Դեղին արտույտ» և «Խորան» մանկապարտեզների դաստիարակների հետ կազմակերպվեցին պարբերական բնույթ կրող քննարկումներ՝ «Մայրի» հաճախող երեխաների վերաբերյալ:
Կազմակերպվեցին շահառուների ծնողների հետ հանդիպումներ:

«Մայրի» 3 մասնագետները մասնակցեցինք ԳԱԿ կողմից կազպակերպված դասընթացին: Ներկայացրեցինք թե՛ մեր մեթոդաբանության հիմքերը, թե՛ պրակտիկ վարժությունները, որ մշակել ենք երեխաների հետ մեր աշխատանքում:

Հաշվետու տարվա ընթացքում ԲՊՀ 22 ուսանող շաբաթական մեկ անգամ ռիթմով այցելեցին «Մայրի»՝ պրակտիկայի նպատակով: Նրաք ծանոթացան հատուկ մանկավարժության գործնական մոտեցումների հետ, ծանոթացան հատուկ մանկավարժի գործառնությունների հետ, հնարավորություն ունեցան կատարել երեխայի դիտարկում, փորձել գնահատել նրանց անհատական կարիքները: Նրանց տրվեցին նաև որակական վերլուծության հիմունքները և հատուկ մանկավարժության ոլորտում հոդվածի շուրջ հետազոտություն անելու հնարավորություն:

Մեր շահառուների կողմից արտադրված ապրանքները ցուցադրվեցին բազմաթիվ ցուցահանդեսներում, փառատոններին, ներառյալ՝ Մայրի շենքում:
Սկսած հոկտեմբերից մեր ուժերը ուղղեցինք Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար անկողնի սպիտակեղեն կարելուն: Ավելի քան 30 հավաքածու կարվեց երեք ամսվա ընթացքում:
Մեր հայտարարությամբ «ՄԱյրի» այցելեցին Արցախից եկած հաշմանդամություն ունեցող երեխա ունեցող ընտանիքներ: Իրականացվեց երեխաների կարիքների

գնահատում: Տրվեց մանրամասն խորհրդատվություն ծնողներին՝ տարբեր մասնագետների կողմից:

Շարունակվեց մեր համագործակցությունը Խարբերդի մասնագիտացված մանկատան հետ: Շահառուները թե՛ աշխատում էին արհեստանոցներում, թե՛ պատրաստում երաժշտական համարներ՝ կայանալիք մշակութային միջոցառումների համար:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

https://www.facebook.com/ngomayri

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Ինչպես հասկացա, մեր պատկերացումը հաշմանդամություն ունեցող մարդկանց մասին տարբերվում է նախարարության մասնագետների կարծիքից: Մեզ համար ցանկացած անձ, ով ունի բժշկական եզրակացություն, որը հաստատվում է պարզ դիտարկմամբ, և ունի մեր կարիքը, կարող է դառնալ մեր շահառու: Մեզ համար անակնկալ էր իմանալը, որ պետական ծրագրի շահառու կարող են դառնալ միայն ԲՍՓ եզրակացություն ունեցող անձինք, այն դեպքում, երբ մենք ոչ մի իրավունքն չունենք պահանջելու ծնողներից հաշմանդամության ճանաչման գործընթաց:

Տարօրինակ է նաև մեր լիցենզավորմանը խոչընդոտող «շենքի ոչ մատչելի լինելու» հանգամանքը առաջ քաշելը: Մեր բոլոր, անխտիր բոլոր, ծառայությունները մատչելի են ցանկացած սահմանափակում ունեցող հաշմանդամություն ունեցող մարդկանց համար: Այսպիսի խստություն ցուցաբերել այն պայմաններում, երբ Երևան քաղաքի թեքահարթակների 70 տոկոսից ոչ մի սայլակով մարդ օգտվել չի կարող, այնինչ ահռելի միջոցներ են ծախսվել դրանք պատրաստելու համար, արդար չէ:

Բոլոր դեպքերում, շնորհակալ ենք 2023 տարվա ընթացքում մեր կազմակերպությանը աջակցելու համար: Բազմաթիվ երեխաներ և երիտասարդներ օգտվեցին այս ծրագրից և ստացան որակյալ ծառայություններ:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուներ: ի ցուցակը):

Չունենալով բավարար քանակով հաշմանդամություն ունեցող շահառու մենք դժվար կարողանանք դիմել պետական ֆինանսավորման:

Ասենք միայն , որ մեր մտահղացումները բազմաթիվ են՝ թե՛ մանկավարժության, թե՛ արհեստագործության, թե՛ արվեստի ոլորտներում և մենք կանենք ամենը դրանք իրականացնելու համար:

/Անուն Ազգանուն/ /ստորագրություն/